4271

ՅԵՐԿՐԱՄԱՐ

ՊԱՏՄՎԱԾՔ

83
4-54

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ՄՈՍԿՎԱ 1927

83-3
4-54
ԿԼԻՈՍՍ
ՅԵՐԿՐԱԾԱՐԺ
495 19/III-38

28 JUN 2005
02 NOV 2009

Գ. ԿԼԱՅՍ

83
4-54
1001
1939

ՅԵՐԿՐԱԾԱՐԺ

ՊԱՏՄՎԱԾՔ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
G.C.P.A Publication Department
7/XI-1922
Ա. ՍՅԱՍԼԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄՈՍԿՎԱ, 1927
ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ· ԿԵՆՏՐ· ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

22.05.2013

4271

Թարգմանություն — Ս. Հովհաննիսյանի

Главлит 82431 Тираж 2500

Типография Госиздата „Красный пролетарий". Москва, Пименовская 16.

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ.

Այս պատմվածքի մեջ նկարագրված է չարաչար նահատակությունը յերկու սիրահարների, վորոնք զոհ են դնում յերկրաշարժից սարսափահար յեղած սնահավատ ամբոխի մոլեռանդության։

Առաջ մարդիկ լավ չգիտեյին, թե ինչ տարրերից է կազմված յերկրագունդը և չեյին կարող հասկանալ, թե ինչից է առաջանում յերկրաշարժը։ Մարդիկ մեծ մասամբ տգետ եյին, սնոտիապաշտ, ուստի այդպիսի դժբախտ պատահարները բացատրում եյին իբրև աստվածային պատիժ՝ իրենց գործած մեղքերի համար։ Հոգևորականությունը ամեն ճիգ ու ջանք գործ եր դնում, ամեն կերպ աշխատում եր ժողովրդի մեջ վառ պահել այդ համոզմունքը. և վորովհետև ժողովուրդը յեկեղեցու սպասավորներին համարում եր իր միջնորդը՝ աստծու և մարդկանց միջև, ուստի և հոգևորականությունը իրեն համար խիստ ձեռնտու յեր համարում ահ ու դողի մեջ պահել ժողովրդին և ավելի ու ավելի ամրապնդել նրա վրա իր՝ իբր թե աստվածային իշխանությունը։ Իսկ յերբ ժողովրդի աչքը բացվում եր և նա պահանջում եր, վոր հոգևորականությունը պատասխան տա իրեն, յեկեղեցու սպասավորները իրենց գլխից ճարպիկորեն հեռացնում եյին «դառն բաժակը»—ժողովրդական ցասումը—և ամբոխին գրգռում եյին խաղաղ քաղաքացիներից վորևե մեկի դեմ...

Ահա այդ մասին է խոսվում այս գրքույկի մեջ։

Հայաստանում տեղի ունեցած վերջին յերկրաշարժը դրդեց լույս ընծայելու դերմանացի հեղինակի այս պատմվածքը՝ մասսայական ընթերցանության համար։

Գրքույկիս վերջին մի քանի էջերում տրվում է յերկրաշարժի գիտական հանրամատչելի բացատրությունը.

I

Հարավային Ամերիկայում մի փոքրիկ պետություն կա, վորի բնակիչները բացառապես սպանիացիներ են։ Այդ պետությունը կոչվում է Չիլի, իսկ նրա մայրաքաղաքը— Սանթ-Յագո։

Գարնանային մի որ, այդ քաղաքում մի չտեսնված, մի անասելի կենդանություն եր տիրում։ Փողոցները լիքն եին ժողովրդի խուռն բազմությամբ։ Հսկայական ամբոխներ եին շարժվում դեպի գլխավոր հրապարակը։ Տների պատուհանները միանգամայն բաց եին և այնտեղից կախ ընկած ցած եին նայում հետաքրքրվողների բազմաթիվ գլուխներ։ Շքեղազարդ ու պերճազգեստ կանայք կանգնած նայում եին պատշգամբներից։ Աղմուկ, հրհրոց, ծիծաղ, բացականչություններ, արագախոս զրույց ու քչփչոց—այս ամենը իրար խառնվելով, կազմում եին մի ընդհանուր ժխոր, վոր ուրախ հնչում ու զնգում եր արևառ ոդում։

— Ի՞նչ է պատահել,—խառնվելով ամբոխի մեջ, հարցրեց մի ուղևոր, վոր հենց նոր՝ արևածագին քաղաք եր յեկել։

— Ժողովուրդը յերևի գարնանային մի տոն է տոնում, —ասաց ինքն իրեն ուղևորը։

Նրան պատասխանեց մի կին, վոր հազիվ-հազ ման եր ածում ձկներով լի մի մեծ զամբյուղ։ Դա վաճառուհի յեր, վոր փոխանակ շուկա գնալու՝ միացել եր ամբոխին՝ իր ծանր բեռը ուսերին։

— Վո՞ր տեղից եք յեկել, վոր չեք իմանում այն, ինչի մասին քաղաքն այսքան ժամանակ խոսում է, — ասա

վաճառուհին, զամբյուղը ցած դնելով և հաճույքով կանգ առնելով, վոր փոքր ինչ դեսից-դենից դուրս տա։

— Ցեսս այստեղացի չեմ,—պատասխանեց յեկվորը։

Վաճառուհին սկսեց իր պատմությունը, կարծես ուրախություն զգալով, վոր առիթ ու հնարավորություն կա մի քիչ բամբասանք անելու նորեկ մարդու հետ։

— Այսոր, գիտե՞ք ինչ, մահապատիժ է լինելու։ Ահա այդ է պատճառը, վոր մենք ամենքս գնում ենք հրապարակ։ Իսկ մահապատժի յենթարկելու յեն հարուստ քաղաքացիներից մեկի աղջկան, անունը Ժոզեֆա։ Մատաղահաս և սիրունագեղ մի աղջիկ է Ժոզեֆան. ա՛յ, ինքներդ կտեսնեք։

— Իսկ ինչո՞ւ յեն նրան մահապատժի յենթարկում։

— Յեկեղեցական դատավճռի համաձայն, նրան պետք է գլխատեն։ Առաջ վորոշած են յեղել խարույկի վրա այրել, բայց մեկ ել խղճացել են։ Հարազատներն են միջամտել։ Սակայն նրան ներելու կամ նրա համար մի այլ թեթև պատիժ նշանակելու վոչ մի միջոց չի յեղել և չեր կարելի գըտնել։ Քարոզի ժամանակ ինքը յեպիսկոպոսն ասաց, վոր մեծ հանցագործ է այդ աղջիկը և վոր նրա հոգին ուղղակի դժոխք է գնալու։

— Ախը ի՞նչ մի առանձին բան է արել նա, ձեր այդ մեծ հանցագործը,—հարց տվեց նորեկը համբերությունը կորցնելով և ընդհատելով վաճառուհու սնամեջ դատարկաբանությունները։

— Սկսվել է նրանից, վոր այդ աղջիկը սիրել է մի ուսուցչի, անունը Իյերոնիմ։ Սա յել խնդրել է աղջկա ձեռքը։ Հայրն, իհարկե, չեր կարող թույլ տալ, չեր կարող համաձայնել, վոր իր աղջիկը աղքատի գնա։ Իսկ այդ ուսուցիչը իսկապես վոր խեղճի, աղքատի մեկն է. որվա հացը իր սեփական աշխատանքով հազիվ է վաստակում։ Ցեվ ահա հայրը վորոշում է աղջկան խելքի բերել։ Շատ համառ մարդ է.— մի բան վոր ասաց, այնպես ել պիտի լինի։ Վերցնում ու աղջկանն ուղարկում է կուսանոց։ Այնտեղ նրա մազերը խուզում են։ Ասում են, վոր այնտեղ, այն մենաստանի այգում նա տեսակցել է Իյերոնիմի հետ։ Իսկ այդ մասին վոչ վոք չի իմացել։ Նա իրեն շատ համեստ է պահելիս յեղել, գառնուկի նման հեզ։ Բայց ահա մի անգամ, մի տոն որ՝ միանձնուհիները տաճար գնալիս տեսնում են, վոր Ժոզեֆան ընկած է աստիճանների վրա ու չի կարողանում բարձրանալ։ Կարծում են, վոր յերևի ընկել և ջարդվածք է ստացել—աստիճանները չե՞ վոր քարից եյին—բայց յերեկոյան ժողովրդի մեջ հանկարծ լուր է տարածվում, թե նա պղծել է իր կուսական պատիվը. ուրիշ խոսքով ասած՝ մայր է դարձել։ Վանամայրը մազերն սկսում է փետել։ Այսուհետև,— ասում է,—շատ վատ համբավ կտարածեն մեր մենաստանի մասին։ Միանձնուհիները գժվածի նման դես ու դեն են վազում.—հանցանք, ուղղակի հանցանք, աններելի հանցանք։

Վաճառուհին խոսքն ընդհատեց՝ մի քիչ շունչ առնելու համար։

— Հենց վոր այդ մասին իմանում են, նրան իսկույն ձերբակալում ու բանտ են ուղարկում։ Այն ուսուցչին ել են բանտարկում, վախենալով, թե մի գուցե նա բաներ սարքի։ Ցերը աղջիկն առողջանում է, յեկեղեցական դատ են նշանակում և սկսում նրան հարց ու փորձ անել։ Ամենքն ել գուշակություններ եյին անում՝ թե ինչ դատավճիռ պիտի հանեն։ Ցես հարևանուհուս ասացի.—Տես, ասածս լավ միտդ պահիր. նա կենդանի չի մնալու, վորովհետև—ինչպես վոր յեկեղեցում տերտերն ասաց—նա շատ մեծ հանցանք է գործել։

Զանգի ծանր հարվածներն ընդհատեցին նրա վերջին խոսքերը։

— Ա՛յ, ա՛յ...դա նշանակում է, վոր յերթն արդեն սկսվել է։ Բերում են նրան, հրե՛ն, բերո՛ւմ են...

Ցեվ վաճառուհին վայրկենապես բարձրացնելով զամբյուղը, արմուկներով սկսեց ամբոխի մեջ իր համար ճանա-

պարհ հարթել՝ սրան-նրան բոթելով ու դես ու դեն հրելով։ Զանգակների զրնգոցը հանդիսավոր կերպով զողանջում ու տարածվում եր ողում։ Ամբոխը կարծես թե հանդարտվեց ու յետ քաշվեց։ Հեծելազոր զինվորները առջևից դանդաղորեն քշում եյին իրենց ձիյերը։ Ժոզեֆան, վոտից մինչև գլուխ սև հագած, քայլում եր գլուխը խոնարհած, աչքերը գետնին գցած, քայլում եր անվստահ, անհավասարակշիռ, յերերուն քայլերով։

Նա կարծես թե նրա՛ համար եր նայում գետնին, վոր չսայթաքի կամ վայր չընկնի։ Մինչդեռ նրա լայն բացած աչքերը վոչինչ չեյին նկատում, վոչինչ չեյին տեսնում։ Նրա հայացքի մեջ սառել եր ու չորացած շրթունքների վրա պաղել՝ խելահեղ վշտի ու սարսափի տանջալից արտահայտությունը։ Նրա ջահել դեմքի վրա անմեղ մեղավորի տխուր կնիքն եր դրած։

Ամբոխը ագահությամբ նայում եր Ժոզեֆային։

— Ա՛յ, հիմա իսկապես վոր պետք է կատարվի աստվածային պատիժը։ Նրա մեղսոտ հոգին հանդիստ ու դաղար չպետք է ունենա գերեզմանում,—ասաց մի բարեպաշտ և աստվածավախ քաղաքացի։

Նրանք, ովքեր առաջուց ճանաչում եյին Ժոզեֆային, նայում եյին նրա վրա—վոմանք չարախնդությամբ, վոմանք էլ անտարբեր հետաքրքրությամբ։

— Ցերեսդ շուռ տուր, զավակս,—ասաց մի հարուստ ազնվականուհի իր աղջկան.—քեզ համար դեռ վաղ է այսպիսի բաներ տեսնելը։

Ցեվ աղջիկը, վոր մետաքս եր հագած, խոնարհությամբ շուռ տվեց յերեսը։

— Խե՜ղճ,խե՜ղճ—աննկատելի կերպով աղաղակեց մեկը խիստ ցավակցական ձայնով։

Այդ ձայնը թռավ հասավ նաև Ժոզեֆայի ականջը։ Խեղճն ուզեց բարձրացնել գլուխը, բայց մեկ էլ իսկույն խոնարհեց։ Ամբոխի հետաքրքրությունը ավելի ևս կսկծացրեց նրա սիրտը։

Հեռվում, արեգակի փայլուն ճառագայթների տակ պսպղում եյին հոգևորականության ճոխ ու փարթամ հանդերձները։ Տերտերները գնում եյին աչք և ունք կիտած, դեմքները խոժոռած. պարզ եր, վոր դեպի մեղապարտ միանձնուհին ունեցած նրանց զայրույթը չեր մեղմացել նույնիսկ սարսափելի դատավճիռը կայացնելուց հետո։ Առհասարակ հոգևորականությունը մի առանձին կատաղություն եր զգում դեպի Ժոզեֆան։ Տերտերները վախենում եյին, վոր Ժոզեֆայի վարմունքը ստվեր կգցի իրենց վրա։ Թագցնելով իրենց սեփական մեղքերն ու արատները, հոգևորականությունը ուրիշի մեղքերը պախարակում եր մի առանձին դաժանությամբ։ Ցնկեղեցու այդ բոլոր սպասավորների շարքերում, վորոնք շարունակ քարոզում են «սեր դեպի մտերիմը», չգտնվեց գոնե մեկը, վոր ցավեր, վոր խղճար այդ դժբախտ կնոջ վրա։

Ծերուկ յեպիսկոպոսը դանդաղորեն քայլելով իր փարթամ ու փառահեղ վերնազգեստի տակ, խորապես գնում, կշռադատում, ծանր ու թեթև եր անում իր այն քարոզի խոսքերը, վոր պիտի ասեր այն վայրկյանից հետո, յերբ դահճի հարվածի տակ պիտի ընկներ Ժոզեֆայի գլուխը։ Ինքը շահամոլի ու ագահի մեկն եր։ Ծխականները քանի՜-քանի՜ անգամ դանդատվել եյին՝ ծխատուրքն հավաքելու միջոցին նրա գործ դրած ճնշումների ու խարեբայությունների դեմ։ Բայց այդ վայրկյանին նա ամենևին չեր մտածում իր մեղքերի մասին. նա միայն մտածում եր, թե ինչ խոսքերով և ինչ կծու դարձվածքներով անվանարկե դժբախտ աղջկան, նույնիսկ այն դեպքից հետո, յերբ աղջիկը մահով կքավե իր «հանցանքը»։

Իսկ զանգերը դեռ զողանջում եյին...

Ահա մոտենում են հրապարակին։ Ժոզեֆան բարձրացնում է գլուխը։ Իրեն են նայում միլիոնավոր աչքեր։ Նա նկատում է այդ մարդկանց բոլոր դեմքերի վրա, բոլոր հայացքներում ինչ վոր գազանային հետաքրքրության ար-

տահայտություն. մարդի՞կ, վոր նրա տանջալից մահը դարձրել են մի ինչ վոր զվարճալի ներկայացում։ Բոլորի հայացքներում նա կարդում է իր դատավճիռը։ Մի՞թե նա կարող է ուրիշ բան սպասել այդ ամբոխից, վորն համոզված է՝ թե այս բոպեյիս պիտի կատարվի աստվածային պատիժը... Չե՞ վոր ինքը յեկեղեցին է հանձնել նրան դահճի ձեռքը։

Ժոզեֆան դիտում է իր չորս կողմը։ Ինչքա՞ն պայծառ է արևը, ինչքա՞ն հաճելի և ինչքա՞ն քաղցր է նա այսոր ժպտում։ Մի ակնթարթ նա դիտում է արեգակնային փոշու զվարթ խաղը։ Ինչի՞ մասին է նա մտածում։ Իր յերեխայի մասի՞ն, վորին վերցրել է մենաստանի վանամայրը, թե՞ իր դժբախտ վիճակի մասին, կամ գուցե վերհիշում է մի ա՞յլ բան...

Ահա և այն հրապարակը, ուր պիտի կատարվի մահապատիժը։ Ժոզեֆային այնպես թվաց, թե ինքն արդեն տեսնում եր դահճի մռայլ դեմքը և նրա փայլուն կացինը։ Ժոզեֆայի դեմքն այլայլվեց, սիրտն սկսեց ուժգնորեն բաբախել և նրա կրծքից դուրս թռավ մի խոր հառաչանք։

Իսկ զանգակները ղողանջում են ու ղողանջում...

Հեծյալ զինվորները կիսաշրջանաձև դիրք են բռնել։ Ժոզեֆային տանում են դեպի մի բլրակաձև բարձրություն։ Նա այնտեղ իսկույն նկատեց, վոր իրեն և նայում խոժոռ հայացքով մի ծերունի։ Վերջինս իր նվաղած, պառաված ձայնով կարդաց դատավճիռը։ Ժոզեֆան մի բառ անգամ չկարողացավ հասկանալ։ Աչքերը մթնեցին։ Սպրդնեց և սկսեց դողդողալ։ Ցեթե չբռնեին, յերևի կընկներ։

Դատավճիռը կարդացված է արդեն։ Զանգերի ղողանջն էլ ահա դադարեց...Լռությո՞ւն է տիրում։ Խոր, համատարած լռություն...

II

Քաղաքի բանտերից մեկում տառապում եր այն ուսուցիչը, վորին սիրում եր Ժոզեֆան և վորի մասին խոսում եր ամբողջ քաղաքը՝ Ժոզեֆայի պատմությունը բերանից-բերան գցելով։

Նրան ձերբակալեցին հենց այն որը, յերբ մահապատիժն եր հայտարարված։ Նա հուսահատ փորձեր եր արել, վոր Ժոզեֆային փրկե, հետևանքը յեղել եր այն, վոր հիմի ինքն եր բանտում փակված։

Իյերոնիմ—այդպես եր կալանավորի անունը։

Ահա նա կանգնած է իր նկուղի պատի ուռուցքաձև դուրս ցցվածքի վրա և նայում է նեղլիկ պատուհանից, վոր ծածկված է յերկաթյա վանդակով։ Նա տեսնում եր միայն կապույտ յերկնքի մի փոքրիկ կտոր և լսում ճռվողյունը մի թռչնի, վոր նստած եր այնտեղ, պատուհանի այն կողմը, արևից տաքացած քարի վրա։ Իյերոնիմը ինքն իրեն շարունակ կրկնում եր, վոր այսոր պետք է մահապատիժը կատարվի, իսկ ինքն անզոր է վորևե բանով ոգնել Ժոզեֆային։ Ցերբեմն նրան այնպես եր թվում, թե ինքը խելագարվում է վշտից ու թախծից։ Մի յերկու անգամ նա բռնեց ուժգնորեն և թափահարեց պատուհանի յերկաթյա ժանգոտ վանդակը։ Նա այդ արեց ուժերի այնպիսի լարվածությամբ, վոր յեղունդների տակից արյուն կաթկթաց։

Բայց ահա հնչեց հանդիսավոր զանգահարությունը։ Իյերոնիմը ցնցվեց և սպրդնեց։ Նա հասկացավ, վոր մահապատժի ժամը մոտ է։

Նա կամենում եր գլուխը պատերին խփել։ Նա խելագարի նման եր լսում պատուհանի տակ անհոգ ճռվողող թռչնին և մեծ զանգի ղողանջյունը։ Հանկարծ մի նոր միտք ծագեց նրա տաքացած գլխում։

Նա պատի ցցվածքից վար ցատկեց և մեջքն ուղղելով սկսեց յերկու ձեռքով շոշափել պատի ցցվածքը։ Ապա նա սկսեց իր յերկար վերնազգեստը ծվեն-ծվեն անել յերկար շերտերով։ Նա այնքան արագ եր անում այդ բոլորը, վոր շուտով պատմուճանից մնացին միայն յերկար ծվեններ։ Իյերոնիմն սկսեց նրանցից թոկ հյուսել, վորը իրեն պետք է ազատեր տանջանքներից։

Մի քիչ անց արդեն թոկը պատրաստ եր։ Իյերոնիմը նրա մի ծայրը կապեց յերկաթյա վանդակի մի անկյունից, իսկ մյուս ծայրը ողակ շինեց։ Ցերը վերջացրեց, խորը հառաչեց, կարծես մի փոքր թեթևություն զգալով։

Իր գործի ժամանակամիջոցին նա նույնիսկ չնկատեց, թե ինչպես զանգահարությունը դադարեց։ Նա վոտերի ծայրերի վրա բարձրացավ և վիզը ձգելով՝ սկսեց ականջ դնել։ Ցեվ հանկարծ մի ծանր հարված սասանեցրեց բանտի կամարները։ Այդ վորոտը, վոր նման եր ամպրոպի ճայթյունին, պայթեց այնպիսի սասանեցուցիչ և խլացուցիչ ուժով, վոր դժբախտ կալանավորին թվաց, թե յերկիրը պատռվեց և յերկու կես յեղավ։ Սարսափից քարացած, Իյերոնիմը յերկու ձեռքով ամուր փարվեց այն ցցվածքին, վորի վրա ուզում եր իրեն զրկել կյանքից։ Նրա աչքերը մթնեցին։

Շառաչն ու վորոտը կրկնվեցին ահարկու ուժով։ Ահռելի աղմուկը, շռինդն ու շաչյունը, դղրդյունն ու շրռիյունը ականջ եյին ծակում։ Այնուհետև Իյերոնիմը տեսավ, թե ինչպես տատանվեց բանտի քարաշեն պատը, թե ինչպես հատակը ճաքճքեց նրա վոտքերի տակ, և թե ինչպես ամբողջ շինությունը թեքվեց ու խարխլեց, թղթախաղից շինած տնակի նման։ Պատը վերջապես փլվեց սարսափելի շառաչով։ Թափվելու միջոցին մի քանի գերաններ դեմ յելան հարևան տան պատին, բայց չդիպան ու չվնասեցին Իյերոնիմին։ Ցեվ նա անվնաս մնաց այդ գերանների ծածկոցի տակ, վորոնք մի վայրկյանում ծռմռվեցին ու այլակերպվեցին, կասես թե վոչ մի քաշ չունեցող, թեթև լուցկիներ լինեյին։ Մի տեղից ընկնող մի քար հարվածեց Իյերոնիմի ուսը, կսկծացրեց սիրտը և ստիպեց նրան սթափվել։

Նա չեր հասկանում, թե ինչ է պատահել։ Դողդողալով, բիզ-բիզ կանգնած մազերով, նա սողաց քարերը չանկռտելով։ Փլված պատում մի խոշոր անցք եր բացվել։ Իյերոնիմը փորսող տալով հասավ մինչև այնտեղ և մթագնած աչերով, ամբողջովին փոշեթաթախ, ահռելի դղրդյունից խլացած՝ կանգ առավ։ Նրան այնպես եր թվում, թե ցնցվում ու սասանում են նույնիսկ յերկրի խորքերը։

Մի քիչ շունչ քաշելուց ու հանգստանալուց հետո՝ Իյերոնիմը փորձեց փորսող տալով անցնել այդ անցքի միջով։ Նա անցավ, բայց սաստիկ ու մեծ դժվարություններով։ Ամբողջովին չանկռտված ու արյունոտված, նա վերջապես մտավ քաղաք։

Վոչ փողոց կար և վոչ էլ հրապարակ։

Թե՛ փողոցը և թե՛ հրապարակը դարձել եյին ավերակների մի այլանդակ, մի խառնաշփոթ կույտ։ Փլված տների տանիքները լեռնաշարքերի նման փակել եյին բոլոր անցքերը՝ իրենց փլատակների կույտով։ Ավերակների վրայից փոշու ամպ եր բարձրանում։ Ճայթյուններն ու դղրդյունները մի բոպե անդամ չեյին դադարում։ Գուցե այդ փլատակների տակ հազարավոր մարդիկ անոգնական ընկած ոգնություն եյին աղերսում.—սակայն վոչ հառաչ և վոչ էլ բղավոց չեր կարելի լսել այդ հրեշավոր դղրդյունի մեջ։

Իյերոնիմը խելագարի նման սկսեց փախչել։ Ուր վոր վոտով չեր կարելի անցնել, սողեսող եր անցնում։ Նա չգիտեր, թե ուր փախչե. կամենում եր միայն մի փոքր հեռու լինել այդ դժոխքից։

Մի քանի տեղ հրդեհ եր բռնկել և հրեղեն լեզուները լիզում եյին փլատակների կույտերը։ Մի քանի փողոցներ հեղեղված եյին ջրով։ Այն, ինչ վոր կրակից փրկվում եր՝ ջուրն եր վոչնչացնում։ Վայրագ զարհուրանքով մարդիկ փրկության յելք եյին վորոնում, դես ու դեն եյին ընկնում, թպրտում, վոչնչանում։ Մի տեղ մի կին ոգնություն եր աղերսում։ Նրա զույգ վոտքերը ջախջախված եյին։ Իյերոնիմը ձեռքը մեկնեց դեպի նա, սակայն հենց այդ վայրկյանին փլվեց հարևան տան տանիքը և պոկված ու մի կողմ շպրտված քարը դժբախտ կնոջ գլուխը դարձրեց արյունոտ շաղախ։ Իյերոնիմն ընկավ և խկույն վեր թռավ տեղից ու նորից սկսեց փախչել՝ խելացնորի նման։

Նա հասավ քաղաքի դարպասներին։ Մինչև գոտին ջուրը մտնելով, դուրս յեկավ մի բաց տեղ և ոգնեց դուրս գալ նաև մի ծերունու, վոր մի մեծ ու ծանր կապոցի տակ մեջքը կորացրած՝ տնքտնքում ու շնչասպառ եր լինում։

— Դե՛ն շպրտեցեք այդ կապոցը և միայն ձեզ փրկելու մասին մտածեցեք,—ասաց Իյերոնիմը կարեկցաբար։

Ծերուկը համառորեն և չարախնդությամբ գլուխը թափահարեց և ավելի ևս ամուր կպավ իր բեռանը, կարծես թե վախենալով, վոր ձեռքից կխլեն։ Իյերոնիմը վազեվազ հասավ նրա յետևից։

— Այս կապոցի մեջ իմ ամբողջ ունեցած-չունեցածն գ,—խզված ու խռպոտ ձայնով ասաց ծերուկը և սկսեց թանչոց տալ։ Ցեվ այլևս ուժ չունենալով ծանր բեռը տանելու, նա վայր ընկավ, սակայն բեռը ձեռքից բաց չթողնելով։

Իյերոնիմը կանգ առավ։ Նա սկսեց չորս կողմը դիտել վորոնող ու մոլար հայացքով։ Հանկարծ վորոտալից դղրդյունը կրկին անդամ ճոճեց յերկիրը։ Իյերոնիմի աչքերում շողշողացին ինչ վոր հրեղեն անիվներ, գլուխը պտույտ յեկավ, շնչառությունը կանգ առավ, և ընկնավորի նման հանկարծ թրմփաց գետնին ու մնաց անշարժ։

Թե ինչքան ժամանակ նա մնաց այդպես գետնի վրա ընկած, Իյերոնիմը ինքն էլ չիմացավ։ Զով քամու մի թարմ հոսանք շոյեց նրա դեմքը. նա աչքերը բաց արավ և ուղիղ իր գլխավերևը տեսավ յերկինքն ու վարդագույն ամպեր։ Միառժամանակ նա դիտում եր, թե ինչպես են ամպերը լողում։ Նա չեր հասկանում թե ինչ է պատահել և չգիտեր թե ուր է գտնվում ինքը։ Վերջապես գիտակցությունը պարզվեց,—ուշքը գլուխն յեկավ։

Իյերոնիմը տեղից բարձրացավ, նստեց և սկսեց գլուխը շոշափել։ Համոզվեց, վոր դեռ կենդանի յե։ Մի անասելի ուրախություն համակեց իրեն։ Նա սկսեց դես ու դեն նայել, շրջակա առարկաները դիտել։ Նրա հայացքը կանգ առավ

հեռվում ընկած քաղաքի վրա.—կամ ավելի ճիշտ՝ նա տեսավ նախկին քաղաքի ամայի ավերակները։ Մի ակնթարթում նա վերհիշեց ամեն ինչ։

Զարհուրելի վերհիշումներ եյին դրանք։ Նա նորից տեսավ փլչող ու թափվող շինություններ, բոցերի հրեղեն լեզուներ, հեղձուցիչ ծխի վոլորապտույտ ողակներ, ջրածածկ փողոցներ, մարդկանց և կենդանիների դիակներ։ Նա կրկին լսեց սառսռեցուցիչ դղրդյուն, նա նորից վերապրեց այն անհելի վայրկյանները, յերբ ինքը խելացնորի նման սողում եր, վազում, ընկնում ու նորից բարձրանում, իսկ մահը թեատարած հետևում եր իրեն, պտույտ եր գալիս իր գլխավերևը։ Զարգանդելով այդ բոլոր վերհիշումներից ու վերապրումներից, Իյերոնիմը յերկու ձեռքով ծածկեց յերեսը և սկսեց հեկեվալ։

Այնուամենայնիվ նա կենդանի՜ է... դեռ կենդանի... Ջերմ ուրախությունը համակեց նրան, սիրտն սկսեց ուրախ բաբախել և արտասուքն ելի լցրեն աչքերը։ Նա նստած եր անշարժ և լուռ վայելում եր վայրկենական ուրախության այդ հիասքանչ զգացմունքները։ Բայց հանկարծ ուրիշ վերհիշումներ նրա արյունը սառեցրին յերակներում։

Նա վերհիշեց բանտը, զանգերի ղողանջը, ժողեֆայի մահապատիժը։ Ի՞նչպես կարող եր մոռանալ նրան։ Ծանր վիշտը կրկին համավեց նրա սիրտը։ Նա մոլոր քայլվածքով շարունակեց իր ուղին, առանց հաշիվ տալու իրեն թե ո՞ւր և գնում ինքը։ Հեռվում նշմարվում եր մի փոքրիկ անտառ։ Յերբ Իյերոնիմը հասավ ծառերի շվաքներին, այստեղ ու այնտեղ նա սկսեց նկատել մարդկանց, խոտերի վրա վոմանք նստած, իսկ վոմանք՝ պառկած։ Յերկրաշարժից փրկվածները այստեղ եյին պատսպարվել, այստեղ եյին ապաստան գտել։ Կանայք որորում ու ճոճում եյին յերեխաներին։ Այստեղ-այնտեղ ճրթճրթում եյին խարույկները։ Մի ծերուկ հաց եր կտրատում և բաժանում չորս կողմը խմբված յերեխաներին։

Իյերոնիմը մտավ ամբոխի մեջ, վոր զբաղված եր իր ունեցածով։ Նա վախվխելով ու անվստահությամբ հարց եր տալիս՝ արդյոք մահապատիժը կարողացա՞ն կատարել։ Վոմանք պատասխանում եյին, թե հաստատ չգիտեն, իսկ վոմանք ել՝ կոշտ ու կոպիտ կերպով խրկում, վռնդում եյին նրան։ Այժմ վոչ վոքի չեր հետաքրքրում Ժոզեֆայի վիճակը. ա՛յժմ, յերբ յուրաքանչյուրի կյանքը մազից ե կախված։ Մի կին խղճահարվելով այդ մարդու վրա, վոր ապարդյուն և անհույս կերպով իր հարցի պատասխանին եր սպասում, կանգ առավ և ասաց.

— Դուք հարցնում եք, թե արդյոք պատժեցի՞ն այն միանձնուհուն,—նա մի քիչ մտածեց, վոր լավ հիշի, լավ միտը բերի.—Հա՛, պատժեցին։ Մահապատիժը կարողացան իր ժամանակին կատարել։

— Դուք այդ հաստա՞տ գիտեք,—կրկին անգամ հարցրեց Իյերոնիմը, հուզմունքից դողացող ու խզված ձայնով։

— Ստելու կարիք չունեմ,—չոր կերպով պատասխանեց այդ կինը՝ հեռանալով։

Իյերոնիմը թիկն տվեց այն ծառի կոճղին, վորի մոտ ինքը կանգնած եր։ Ինչո՞ւ, ինչո՞ւ համար ինքը մնաց կենդանի։ Ինչո՞ւ ինքը խուսափեց մահից։ Ինչո՞ւ խելագարի մանդուրս պրծնելով՝ փախավ քաղաքից։ Ինչո՞ւ իրեն չձգեց կրակների մեջ, վոր ազատվեր այս տանջանքներից։ Ա՜հ, յերանի այն ծառը հենց այս վայրկյանին տապալվեր և ջախջախեր այդ դժբախտ մարդուն...

Ցերը հուսահատության վայրկյանն անցավ՝ նրա ցավատանջ ու բզկտված հոգում աղոտ հույսի մի կայծ շողշողաց։ Նա ամբոխի մեջ սկսեց շրջել վորոնող հայացքով, սակայն այնտեղ գտնված կանանցից և վոչ մեկը նման չեր Ժոզեֆային։ Անյերևակայելի մի թախիծ համակեց նրան։ Նա վորպես վիրավոր գազան՝ փախավ դեպի անտառի խորքը՝ մարդկանցից հեռու։ Նա կամենում եր մենակ լինել իր վշտի հետ։

Հանկարծ Իյերոնիմը կանգ առավ մեխվածի նման։ Առվակի ափին չոքած եր մի կին և պատրաստվում եր իր յերեխային լողացնելու։ Դա Ժոզեֆան եր։

III

Ցերը առաջին ցնցումների վորոտը լսվեց և մարդիկ սարսափահար յեղած սկսեցին դես ու դեն փախչել, Ժոզեֆան նույնպես վազեց նրանց յետևից։ Սակայն իր կրած տանջանքներն ու վերապրած հուզմունքները, վոր արդեն ջլատել եյին նրա ուժերը, ուժասպառ արին նրան և շուտով նա միանգամայն մենակ մնաց փողոցներում, վորոնք այլևս նման չեյին փողոցների, վորովհետև յերկրաշարժը այլանդակել, քարուքանդ և տակն ու վրա յեր արել նրանց։

Բախտավոր դիպվածի շնորհիվ՝ քաղաքի այդ մասը ամենից քիչ եր վնասվել։ Ժոզեֆան կարողացավ հասնել մեհնաստանին։ Նա ուզեց զինքը գցել վանամոր խուցը, սակայն մուտքն ու աստիճանները բոցավառված եյին։ Ժոզեֆան մի ցատկումով ընկավ այգին, վազելով մոտեցավ պատին, վորտեղ խուցի պատուհանն եր, և սկսեց բաղխել։ Նրան պատասխանեց յերեխան՝ լացախեղդ ձայնով։ Նա փորձեց պատուհանով ներս սողալ, սակայն վերջինս շատ եր նեղ. վանդակն եր խանգարում։ Զայրացած մայրը վերցրեց մի քար և սկսեց ջարդել յերկաթե ճիպոտները։ Պատի փայտակառույցը այնքան հնամաշ եր, վոր հեշտությամբ տեղի տվեց գործադրած ուժի առաջ։ Ժոզեֆան ներս սողաց խուցը, վերցրեց իր յերեխային և նրա հետ միասին շարունակեց իր հետագա ամբողջ ճանապարհորդությունը։

Հասնելով անտառ՝ Ժոզեֆան շնչակտուր յեղածի նման ընկավ առվակի յեզերքին, խոտերի վրա։ Փոքր ինչ հանգստանալուց հետո՝ նա լվացեց յերեսն ու չանկոտած ձեռքերը, թափ տվեց շորերը և վորոշեց յերեխային լողացնել։ Այդ վայրկյանին նա լսեց Իյերոնիմի ուրախ բացականչությունը...

1001/4939

Ցերը տեսակցության առաջին ուրախությունից այնքան կշտացան, վոր կարող եյին խոսել, նրանք սկսեցին իրար պատմել իրենց գլխի ամբողջ անց ու դարձը։ Նրանք մի քիչ հեռու քաշվեցին, վորպեսզի մարդիկ չտեսնեն իրենց յերջանկությունը ու չզայրանան։ Արդեն սկսել եր մթնել։ Ցերեվում եր, վոր պարզ ու պայծառ գիշեր պիտի լինի։

Ժամանակ եր արդեն ոթևանի մասին մտածելու։ Իյերոնիմն սկսեց տերևներ ու խոտ հավաքել։ Մի բուռն խտիտ խոտ—և անկողինը պատրաստ եր։ Քնելուց առաջ նրանք յերկար զրուցեցին ապագայի մասին և քնեցին միայն ա՛յն ժամանակ, յերբ վճռեցին փախչել այդ յերկրից Իյերոնիմի հայրենիքը, նրա ծնողների մոտ։

Ցերը Իյերոնիմը զարթնեց, արևն արդեն բարձր եր կանգնած յերկնքում։ Ժոզեֆան ծիծ տվեց յերեխային, յերջանկափայլ հայացքով նայելով նրա փոքրիկ ու ժպտուն դեմքին։ Անտառում ձայներ լսվեցին։ Նրանք, ովքեր կարողացել եյին դեսից-դենից՝ այս կամ այն տեսակի ուտելեղեն վերցնել՝ խարույկի վրա կերակուր եյին պատրաստում։ Իյերոնիմը հիշեց, վոր ինքն ընտանիքը կերակրելու համար վոչինչ չունի։

Այդ վայրկյանին մի տղամարդ մոտեցավ Ժոզեֆային։ Նա գրկին սեղմած ուներ մի ծծկեր յերեխա։

— Մի մեծ խնդիրք ունեմ,—ասաց նա՝ դիմելով յերիտասարդ կնոջը,—չե՞ վոր յես ձեզ մի քիչ ճանաչում եմ...

Ժոզեֆան հուզմունքից շփոթվեց, տեսնելով, վոր այդ տղամարդը իր նախկին ծանոթներից է։ Սակայն մարդը ժպտալով՝ սիրտ տվեց Ժոզեֆային։

— Իմ անունը Ֆերնանդ է,—ասաց նա։—Մի ժամանակ մենք հարևաններ եյինք... Ա՛յ, այս փոքրիկ հիճուն,—նա ցույց տվեց յերեխային, վոր այդ միջոցին դառնագին կերպով լաց եր լինում,—իմ տղան է։ Նա սաստիկ քաղցած է, իսկ մայրը վիրավոր ընկած։ Ցեթե դուք համաձայնեյիք նրան մի քիչ կերակրե՞լ... Ցերեխան կարող է քաղցից մեռնել...

Հոր աչքերը լցվեցին արտասուքով։ Նա չեր նայում Ժոզեֆային, կարծես վախենալով, վոր կարող է մերժել։

— Այսպիսի դժբախտության ժամանակ ամեն մարդ պարտավոր է ոգնել ուրիշին,—պատասխանեց Ժոզեֆան։

Ցեվ իր յերեխային հանձնելով Իյերոնիմին՝ մոտեցրեց կրծքին ոտար յերեխայի շրթունքները։

Ցերը յերեխան ծծից կշտացավ, Ֆերնանդը Ժոզեֆային և Իյերոնիմին հրավիրեց այնտեղ, ուր զետեղված եր իր ընտանիքը, ասելով, վոր ինքն ունի ուտելու պաշար և պարտավոր է նրանց հետ կիսելու։ Ժոզեֆան քաշվում եր։ Նա լավ ճանաչում եր Ֆերնանդի կնոջը և քույրերին։ Դրանք ամենքն էլ փքված խանում-խաթուններ եյին և Ժոզեֆան շատ լավ եր հիշում, թե ինչպիսի արգահատանքով ու արհամարհանքով եյին այդ յերևելի տիկինները դեռ յերեկ իրեն դեպի մահապատիժ ճամբում։ Սակայն Ֆերնանդը չափից դուրս թախանձագին եր խնդրում...

Մի ծառի տակ, խոտերի վրա պառկած եր Ֆերնանդի վիրավոր կինը։ Քույրերը Ժոզեֆային դիմավորեցին կարծես թե սիրալիր ու բարյացակամ. միայն մեծ քույրը—Ցելիդավետան, վոր յերեկ իր մի ընկերուհու հետ միասին հրավիրված եր մահապատիժը տեսնելու, արժան չհամարեց ձեռքը մեկնել ու բարևել։ Ժոզեֆան իսկույն հասկացավ, վոր իրենց հոգու խորքում նրանք ամենքն էլ իրեն խիստ ցածր են համարում իրենցից, ուստի և չեն կարող իր վարմունքի հետ հաշտվել նույնիսկ այժմ, յերբ դժբախտությունը հավասարեցրել է ամենքին։ Նա իրեն շատ վատ զգաց։ Հեռացավ այդ յերևելի խանում-խաթուններից և գնաց նստեց գետնին, հողի վրա, վիրավոր կնոջ քով։ Վիրավորը արտասվալից աչքերով շնորհակալություն հայտնեց նրան՝ յերեխային ծիծ տալու համար։ Նույնիսկ Ֆերնանդի աները, վոր վիրավորված եր ուսից, արժանի համարեց բարեժպիտ կերպով գլխով անել Ժոզեֆային։ Ժոզեֆան դարձյալ տխրեց, յերբ հիշեց, վոր յեթե յերկրաշարժի պատճառած այս զարհուրելի

դժբախտությունը չլիներ, այդ բոլոր մարդիկ բուռն արդահատանքով յերես շուռ կտային իրենից։

Իյերոնիմը նույնպես խոր մտածմունքների մեջ ընկավ։ Նա հիշեց բանտը, զանգերի ղողանջը, իր վիշտը՝ այլև իր այն հուսահատ դրությունը, վորի մեջ եր ընկել զանգահարությունը լսելիս, յերբ Ժոզեֆային ճանապարհում եյին դեպի մահապատժի վայրը։ Նա նայեց Ժոզեֆային և վերջինս, իբրև պատասխան, սիրալիր ու քնքշաբար ժպտաց։ Արդյոք յերազ չե՞։

Իյերոնիմը նայեց չորս կողմը։

Մարդկանց դեմքերը դեռ տխուր եյին ու սարսափահար։ Տեղ-տեղ լաց եյին լինում։ Մեկը կնոջն է կորցրել, մյուսը՝ յերեխաներին, իսկ յերրորդը՝—և՛ կնոջը, և՛ յերեխաներին։ Ով վոր մահից ազատվել է, նրան մի ուրիշ դժբախտություն է պատահել—լիակատար տնանկություն։ Նա՛, ով դեռ յերեկ հարուստ եր, մեծատուն, այսոր դարձել և մի վոդորմելի աղքատ, տնանկ։

Այստեղ, անտառում, ամեն ծագում ունեցող մարդիկ իրար են խառնվել։ Կարելի եր նկատել, թե ինչպես հարուստ տիկնոջ քով, (այդ յերկրում չտեսնված բան եր) նստած եր իր աղախինը։ Կեղտոտ բլուզն հագին բանվորը տաք վիճաբանության եր բռնվում յերևելի աստիճանավորի հետ։ Միանձնուհին քնում եր խոտերի վրա, շուկայի վաճառուհու կողքին։ Կոշկակարը իր համեստ կերակրից բաժին եր հանում հարուստ վաճառականի ընտանիքին։ Ամեն ինչ խառնվել եր, դժբախտությունը հավասարեցրել եր ամենքին։ Վորդեկորույս մայրերը մեկմեկու իրենց վիշտն եյին պատմում և դրանով սիրտները հովացնում, իրար մխիթարում։ Տղամարդիկ ավելի շատ դժբախտ պատահարի մասին եյին մտածում և զրուցում եյին յերկրաշարժի պատճառած ավերմունքների ու վնասների մասին։ Պատմում եյին նաև հերոսական դեպքերի մասին։ Իսկ ամենից զարմանալին այն եր, վոր այդ մարդկանցից շատերը, վորոնց դեռ յերեկ արհամարհում եյին,

այսոր դարձել եյին մի-մի հերոսներ։ Մի գյուղացի կրակից ազատել եր իր կալվածատիրոջ աղջկան, մոռանալով այն բոլոր չարիքները, վոր պատճառել եր իրեն այդ աղջկա հայրը։ Մյուսն ազատել եր իր հարևանուհու յերկու յերեխաներին փլատակների տակից։ յերեխաներից մեկի վոտքը փշրված է յեղել և նա ամբողջ ճանապարհը նրան գրկած է բերել։ Այժմ այդ յերեխաների մայրը՝ աչքերն արտասուքով լիքը՝ չգիտեր թե ինչ կերպ հայտնե նրան իր շնորհակալությունը՝ նրա արած լավության համար...

Իյերոնիմը տեսնում եր, վոր մարդկանց վերաբերմունքը դեպի իրենց սկսել է փոխվել։ Շատերն արդեն ճանաչել եյին նրան ու Ժոզեֆային. մարդկանց վերաբերմունքն այլ ևս չար չեր։ Կանայք լաց եյին լինում, լսելով Ժոզեֆայի արած պատմությունը թե ինչպես է փրկվել։ Ցեթե յերկրաշարժի առաջին ցնցումը մի քանի վայրկյան ուշ սկսվեր, Ժոզեֆան արդեն գլխատված կլիներ։ Բարեպաշտ քաղաքացին, վոր ասել եր թե Ժոզեֆայի հոգին դերեզմանում անգամ դադար չի ունենալու, այժմ իրեն մեղապարտ եր զգում նրա առաջ։ Նա քնքշությամբ զբաղեցնում եր Ժոզեֆայի յերեխային, խաղում եր հետը, հիշելով իր փոքրիկ աղջկան, վոր մահացել եր պատի փլատակների տակ։ Ամբոխի մեջ պատահմամբ գտնվում եր նաև այն բանտի պահապաններից մեկը, ուր քիչ առաջ փակված, բանտարկված եր Իյերոնիմը։ Նրանք իրար նայելով՝ սիրալիր ժպտացին, կարծես թե վաղեմի՛ լավ ծանոթներ լինեյին։

Իյերոնիմը իր մոտ կանչեց Ժոզեֆային և ասաց.

— Տեսնո՞ւմ ես թե ինչպես է ամեն ինչ փոխվել մեր վերաբերմամբ։ Ինձ թվում է, վոր մենք համարձակ կարող ենք մնալ այստեղ. մեզ վոչ վոք չի նեղացնիլ, չի վնասիլ։

— Այո՛, այո՛,—ժպտալով հաստատեց այդ ամենը Ժոզեֆան,—մենք կարիք չունենք այստեղից փախչելու։ Մենք վոճրագործներ չենք. այդ բանը ամենքն էլ հասկացել են։ Ցես քիչ առաջ պատահեցի մեր մենաստանից փախած մի

միանձնուհու։ Մենք գրկախառնվեցինք՝ հարազատ քույրերի նման։

— Ցեսս պետք է դիմեմ տեղական վարչության, որ մեզ թույլ տան այստեղ մնալու,—ասաց Իյերոնիմը։

— Դու խնդիրքդ գրավո՛ր ուղարկիր, որ մերժման դեպքում հնարավորություն ունենանք փախչելու,— խորհուրդ տվեց Ժոզեֆան։—Գուցե հայրս կենդանի յե. կգնանք մոտը, կհաշտվենք,—ավելացրեց նա թախծությամբ։—Այսպիսի դժբախտություններից հետո, նախկին բոլոր վեճերն ու անախորժությունները պետք է մոռացվեն։

— Հա՛, չպետք է թաղնվել,—վրա բերեց Իյերոնիմը։ պետք է ներկայանալ և խնդրել, որ թույլ տան մեզ այստեղ ապրելու։

Ցավ նրանք իրար նայեցին յերջանիկ հայացքով...

Կեսորվա դեմ լուր տարածվեց, որ մերձակա մենաստանում հանդիսավոր ժամերգություն պիտի լինի։ Քահանան՝ մի խումբ միանձնուհիներով շրջապատված՝ յեկել եր անտառ։

— Սիրեցյա՛լ ժողովուրդ, թանկագին քույրեր և յեղբայրներ!—ասաց նա զիլ ու բարձր ձայնով։—Ժողովվենք այսոր տաճարում և մեր հրաշագործ փրկության համար շնորհակալություն հայտնենք Բարձրյալին։ Աղոթենք նաև նրա՛նց համար, որոնց հոգիները խոնարհված են արդեն ամենակալ տիրոջ բազկաթոռի առաջ։

Խոսքը վերջացնելով՝ նա համբ ու ծանր քայլերով ուղևորվեց դեպի քաղաք։ Միանձնուհիները հորդորում եյին ժողովրդին ժողովվել տաճարում. աստվածավախ ու բարեպաշտ մարդիկ շարան-շարան, խումբ-խումբ հետևեցին քահանային։

Իյերոնիմն ու Ժոզեֆան նայեցին իրար։ Նրանք յերկյուղ եյին կրում, որ ասեկոսեները կսկսվեն, յեթե իրենք վորոշեն չգնալ։

— Ցեսս կարծում եմ, որ պետք է գնալ,—շշնջաց Ժոզեֆան.—կգտնվեն ագռավներ, որոնք կկտցահարեն մեզ, յեթե մենք մնանք այստեղ ա՛յն միջոցին, յերբ ամենքը տաճարում լինեն։

Ֆերնանդի ընտանիքից վորոշել եյին գնալ՝ ինքը Ֆերնանդը և Ցելիզավետան։ Մյուս քույրը պետք է մնար վիրավորների մոտ։ Ֆերնանդը յերեխային իր գրկից հանելով՝ փորձեց հանձնել կնոջը. սակայն յերեխան ոկսեց այնպես բղավել, որ հնար չեղավ նրան հանդստացնելու։

— Ցեսս ստիպված պիտի լինեմ նրա ծծմայրը դառնալու.—ժպտաց Ժոզեֆան։

Ցավ իր յերեխային տալով Իյերոնիմին, նա վերցրեց բղավկանին, համբուրեց և հարկադրեց սուս կենալ։

— Դուք մի՛ անհանդստանաք, նա ինձ հետ ուրախ և հանդիստ կզգա իրեն.—ավելացրեց նա։

Ֆերնանդը ուղեկցեց Ժոզեֆային, իսկ Իյերոնիմը գնում եր Ցելիզավետայի յետևից։

Ֆերնանդի կրտսեր քույրը, որ մնացել եր վիրավորների մոտ, հանկարծ վազելով հասավ յեղբոր յետևից և կանգնեցնելով՝ սկսեց նրա ականջին մի բան շշնջալ։

— Ի՞նչ դժբախտության մասին ես դու խոսում.—անհամբեր կերպով Ֆերնանդը կտրեց քրոջ խոսքը։—Մի՛ անհանդստանար, գնա՛ հորդ մոտ։

Աղջիկը տատանվելով և տարակուսանքով յետ դարձավ, հաճախ գլուխը շրջելով և նայելով գնացողների յետևից։

Մենաստանը, որի յեկեղեցում պետք է ժամերգություն կատարվեր, գտնվում եր անտառից վոչ-հեռու։ Ժողովուրդը խռնվել եր տաճարի դռան առաջ, իսկ ներսում տեղ գտնելու տեղ չկար։ Ցերեխաները՝ ճնճղուկների բազմահազար յերամների նման՝ թառել եյին մենաստանի ցանկապատերին և այնպիսի սուլոցով ու այնպիսի աղմկալից աղաղակներով եյին դիմավորում, վոչնչանում ամբոխին, որ ծեր վանականը թոկը քաշած սկսեց խռիկ տալ փոքրիկ անասուածներին։

Ամբողջ յեկեղեցին պայծառ և փառահեղ լուսավորված եր։ Հոգևորականությունը դուրս եր յեկել շքեղ զգեստներով։ Ցերբեք մենաստանի յեկեղեցին այսպիսի ժամերգություն չեր տեսել, այսպիսի ճոխ ու փարթամ ժամերգություն՝ այսքան ժողովրդի ներկայությամբ։

Ժամերգությունն սկսվեց։

Ցերբեմն-յերբեմն մի խուլ տրտունջ ու մռնչոց եր բարձրանում դեպի յեկեղեցու կամարները, խանգարելով վայրկյանի հանդիսավորությունը։ Ցերբ ժամերգության վերջը սկսեցին աղոթքներ կարդալ և հոգոց ասել հանգուցյալների համար, ամբոխի մեջ գտնվողներից շատերը դառնագին հեկեկացին։ Իյերոնիմը գլուխը շրջեց դեպի Ժոզեֆան և զարմանքով տեսավ, վոր սա յել է լաց լինում, վոր սրա աչքերից ել են արտասուքի կաթիլներ ծորում։

— Ցես հիշեցի՞ մեր մոտիկ անցյալը,—շշնջաց նա։— Ցես ուրախությունի՞ց եմ լաց լինում, վոր մենք փրկված ենք։

Աղոթքի և հոգոցի վերջին խոսքերը այլևս չեյին լսվում. նրանք խլացան հեկեկանքներից։ Տրտունջն ավելի ևս ուժեղացավ։ Քահանաներից մեկը դուրս յեկավ մեջ տեղը կանգնեց, ապա յետ քաշելով իր փառահեղ ֆարաջայի փեշերը՝ ձեռքը բարձրացրեց և խաչակնքեց ամբոխին։ Հետո սկսեց քարոզը։

Քահանան յերկար ու բարակ խոսում եր այն մասին, վոր կենդանի մնացածները պետք է շնորհակալ լինեն աստծուց։ Սովորական դարձվածքները իրար հետ կապակցելով՝ նա հիշեցրեց «ամենակալ տիրոջ» անսահման ու անեզր գթասրտության և արդարադատության մասին։ Տրտունջն ու բողոքը ավելի և ավելի սաստկացան և ամբոխը հուզմունքից ալեկոծվեց։ Քահանան նույնպես ձայնը բարձրացրեց, ցանկանալով կանգնեցնել տրտունջների ալիքը։ Սակայն նրան չհաջողվեց այդ անել։ Ամբոխը, վոր քանի գնում ավելի բարձր եր սկսում հեկեկալ՝ հիշելով, մտաբերելով մեռածներին, այժմ արդեն սկսել եր գայրանալ։ Ցեվ գայրույթը դուրս ժայթքելու ճանապարհ եր փնտռում։

— Դու ասում ես, վոր աստված գթասի՞րտ է,—խըզված ձայնով բացականչեց մի ծերուկ։— Այդ դեպքում նա թող վերադարձնե իմ յերկու վորդիներին և միակ թոռնիկիս, վոր մնացել ու ջախջախվել են գերանների տակ։

Քահանան շփոթվեց։

— Իսկ ինձ ել թող վերադարձնե իմ կնոջը, վոր այրվել է տանս մեջ,—լսվեց մի ուրիշ ձայն։

Վայրկենական լռությունից հետո՝ քահանան փորձեց աստծու անունից վերջ տալ նման արտահայտություններին, սակայն ապարդյուն։ Տրտունջն ավելի յեր ծայր տալիս.

— Թող նա կենդանացնե իմ փոքրիկ աղջկա դիակը,— բղավում եր մի կին։

— Թող ի՛մ ել քրո՞ջը կենդանացնե...

— Թող ի՛մ ել մո՞րը...։

— Իմ հայրը խեղդվել է հեղեղատի ալիքներում...

— Իմ յեղբայրը գլորվել է վհի մեջ...

— Իմ յերեխան ծխի մեջ խեղդվել է...

— Իսկ իմ յերեխայի ձեռքերն ու վոտքերը քարով ջախջախվել են...

— Իմ ամբողջ ընտանիքն է կործանվել...

— Իսկ յես, փոքրիկ աղջկանս կորցրել եմ ամբոխի մեջ և փախեփախի միջոցին՝ ամբոխը նրան վոտնակոխ է արել, սպանել...

Մռնչոցը քանի գնում սաստկանում եր։ Ամենուրեք նկատելի եյին գրգռված դեմքեր, զայրացկոտ հայացքներ, սպառնագին մեկնված, տարածված ձեռքեր։ Հոգևորականները շփոթմունքից տարակուսած, գլուխները կորցրած, լուռ ու համր կանգնած եյին մնացել ամբոխի ահարկու ալեկոծման և հարձակման դիմաց։

— Ա՛յ, դուք հենց մի բերան աստծուց եք խոսում, նրա գթասրտությունը, նրա արդարադատությունն եք գովում։ Ու՞ր է նրա գթասրտությունը... Ինչի՞ մեջ է նրա արդարադատությունը,—վորոտաց մի ծերուկ։—Ցես մի վոտ-

քով արդեն գերեզմանի շեմքին եմ կանգնած, սակայն կենդանի յեմ մնացել։ Իսկ իմ զույգ, ջահել վորդիները,—հաղթանդամ ու առողջակազմ վորդիները,— մի ակնթարթում շունչները փչեցին՝ թակարդում խեղդված մկների նման։ Թոռնիկս նույնպես մնաց փլատակների տակ. նա դեռ հազիվ մի տարեկան լիներ։ Մայրը խելագարվեց—մարդուն ու վորդուն միանգամից կորցնելու պատճառով։ Ասացե՛ք, կարո՞ղ են համեմատվել դժոխքի տանջանքները իմ ա՛յն տանջանքների հետ, վոր յես զգում եմ այս վայրկյանին...

— Սուս կացեք, անամոթնե՛ր,— խոսքը կտրելով՝ բղավեց քահանան։—Մի՛ բամբասեք աստծուն, մի՛ զայրացրեք նրան, խելառնե՛ր։

Սակայն տրտունջը չեր պակասում։

— Մենք նրան չեյինք զայրացնում, քանի դեռ դուք մեր քթից բռնած մեզ ման եյիք ածում։ Մենք միշտ պաս եյինք պահում, խոնարհ եյինք և հոգիներս կործանելու ահից զողում եյինք. իսկ դուք շատ ու ագահ ուտելուց՝ տրաքվում եյիք։ Ամբարտավանությունը ձեզ անամոթ ու սանձարձակ է դարձրել։ Ո՞ւր է ձեր աստվածը։ Թող նա կործանե այս յեկեղեցին։ Ինո՞ւ նրա բարկությունը հազարավոր անմեղների գլխին է իջել։ Իսկ դուք դեռ կամենում եք, վոր մենք փառաբանենք նրա գթասրտությունը։

— Լռի՛ր, աստվածուրա՛ց,— համբերությունը կորցնելով բղավեց քահանան, ինչքան վոր ույժ ուներ։— Մի՞թե դու չգիտես, ա՛յ պի՛ղծ, անորե՛ն, վոր ըստ արժանվույն են պատժված նրա՛նք, ովքեր մահացել են. մի՞թե չգիտես, վոր նրանց գլխին աստվածային պատիժ է թափվել։

Հաղթանդամ մի գյուղացի, վորին ուղղված եյին այդ խոսքերը, դուրս յեկավ առաջ և ասաց.

— Ցեսլ լռելը—կլռե՛մ... սակայն դո՛ւ ասա, թե ինչո՞ւ ինքդ աստծու բարկությունից ու պատժից ազատվեցիր։ Ինչո՞ւ հապա ինքդ կենդանի մնացիր։ Իմ ջուխտ վորդիները կրակի մեջ տապակ-տապակ յեկան, այրվեցին, ածուխ կտրեցին.— Նրանցից մեկը հինգ տարեկան դեռ չկար.— ասա՝ ի՞նչ եր նրանց մեղքը։ Իսկ դո՞ւ։ Դո՞ւ չեյիր արդյոք իմ կաշին քերթում, յերբ քո տասանորդը ստանալու ժամանակը մոտենում եր։ Դո՞ւ չեյիր յերկու տարի սրանից առաջ անպատվել իմ աղջկան։ Դո՞ւ չեյիր արդյոք հետապնդում ու լկում ջահել կանանց ու աղջկերանց, վորոնք գալիս եյին մոտդ՝ խոստովանելու։ Հապա ինչո՞ւ քո գլխին աստծու պատիժը չիջավ։

— Ա՛յ, դուք վճռել եք աստծու դովքն անել, այսքան լույսեր եք վառել և այսքան ժողովուրդ հավաքել։ Մարդակե՛ր հովիվներ, ինչո՞ւ դուք առաջ բաց չարիք ձեր մենաստանի դռները, յերբ մենք թափթփված եյինք անտառում և վիրավոր պառկած եյինք հողի վրա։

— Սո՛ւտ եք ասում. մենք վիրավորներին ընդունել ենք,— պաշտպանվել սկսեց մի վանական։

— Այո՛, դուք ընդունել ե՛ք... ընդունել եք միայն յերկու-յերեք մարդու, այն ել չաղ վարձատրությամբ։ Չե՞ վոր դուք, որբազան հայրերդ, չեք սիրում ձրի վոչինչ անել։ Իսկ յեթե մենք ամենքս ամբոխով՝ սխալմամբ գայինք խոնվեյինք ձեր պատերի տակ և աղերսեյինք ապաստան տալ մեզ, դուք մեզ վրա յերևի բաց կթողնեյիք ձեր շղթայազերծ շներին ու գամփռներին։

Ամբոխի տրտունջին վերջ չկար։ Հոգևորականությունը մեծ հուզմունքով սպասում եր մի վանականի գալուն, վոր «սուրբի» հռչակ եր վայելում, և վորի սխրագործություններին ու հրաշագործություններին մասին ժողովուրդը պատմում եր ամենացանցառ և ամենատխմար հեքիաթներ։ Այդ վանականը նաև լավ քարոզչի համբավ ուներ։ Վանականը մենակյաց կյանք եր վարում։ Ասում եյին, վոր իբր թե նա սնվում եր միայն և միմիայն հացով ու ջրով և այնպիսի հրաշագործություններ եր կատարում, վոր վոչ վոք դեռ չի տեսել, վորին ինքը Քրիստոսը կնախանձեր։

Ամբոխը լուռ ու մունջ յետ քաշվեց և տեղի տվեց այդ

ալևոր, բարձրահասակ մարդու առաջ, վոր հաստ ու կոպիտ ձայն ուներ և հագած եր վանականի կոշտ ու կոպիտ ֆարաջա։ Նա քայլում եր դանդաղ ու համբ քայլվածքով, հենվելով իր ծանր ու հաստ գավազանին։

Տրտունջը կամաց-կամաց հանդարտվում եր։ Ծերունին անվրդով սպասում եր՝ թե յերբ պետք է լիակատար լռություն տիրե. նրա նիհար ու վտիտ դեմքը, նրա իշխող ու այրող հայացքը աղդեցին ամբոխի վրա։ Ամբոխը լռեց։

Վանականն սկսեց խոսել։ Շատերը կարծում եյին ու սպասում, վոր վանականը զայրացկոտ ճառ կարտասանե, անեծքներ ու սպառնալիքներ կթափե։ Սակայն նա խոսեց մեղմ, հեզ, բայց պարզ, կտրուկ և հասկանալի։

— Ցեռ աստծու գթասրտությունը տեսնում եմ նրանում, վոր ավերված քաղաքում դեռ կենդանի մարդիկ են մնացել։

Նա խոսքն ընդհատեց։ Նա չափից դուրս շատ լավ գիտեր, վոր ինքը կարողանում է աղդել և իշխել մարդկանց վրա։ Նա սովոր եր և սիրում եր, վոր իր ամեն մի խոսքին հավատան։ Նա գիտեր, վոր շատերը չեյին կարողանում տանել, չեյին կարողանում դիմանալ նրա շեշտակի ու անթարթ հայացքին, վորովհետև ժողովուրդը նրան սուրբ եր համարում։

Ամբոխը նայում եր վանականին սպասողական դրությամբ, ահ ու սարսափով։ Մութ ու տխմար մարդիկ սկսել եյին դող դալ։ Նախկին բղավողները ձեն ու ծպուտ կտրած՝ լռել եյին. թեև թերահավատությամբ, բայց լռել եյին։

— Մարդկային դատաստանը վոչինչ է ամենաբարձրյալի դատաստանի առաջ։ Ա՛յ՝ մենք ամենքս մեր աչքով տեսանք աստծու դատաստանը։

Նա ձեռքը բարձրացրեց և ցույց տվեց յեկեղեցու պատի մեջ առաջացած ճեղքը։ Ապա սկսեց խոսել յերկրաշարժի սարսափների մասին, նրա պատճառած վնասների, նրա կատարած ավերումների մասին։ Նա պատմում եր անթիվ ու

անհամար դժբախտությունների մասին, վոր պատճառել եյին ստորյերկրյա ցնցումները. պատմում եր թե ինչ զարհուրելի և ինչ տանջալից մահով եյին մեռնում մարդիկ. պատմում եր դիակների մասին, վորոնց հեղեղատն եր քշում, պատմում եր ածխացած դիակների, ծխի մեջ խեղդվածների և փլատակների տակ ջախջախվածների մասին։ Նա ասում եր, վոր ինքը տեսել է ջարդված գլուխներ, զարհուրելի վերքեր—մարմիններ՝ առանց վոտքերի և վոտքեր՝ առանց մարմինների։ Նա պատմում եր թե ինչպես մարդիկ լալահառաչ աղերսում եյին, վոր խփեն ու սպանեն իրենց, վորպեսզի միանգամից ազատվեն իրենց տանջանքներից։ Նա նկարագրում եր, թե ինչպես եյին վիրավոր մարդիկ սողում գետնի վրայով և վոռնում՝ վայրի գազանների նման։

Այն, ինչի մասին վոր վանականն եր խոսում, դեռ շատ վառ եր ու կենդանի ամենքի հիշողության մեջ... Մահասառսուռ սարսափը քարացրել եր ամենքին։ Տեղ-տեղ լսվում եյին ջղաձգային հեկեկանքներ։

— Սա դեռ բոլորը չե,— ավելացրեց վանահարը։— Դուք կվերադառնաք քաղաք և դիակների գարշահոտությունից կսկսեք խեղդվել։ Դուք սովից տանջվելով՝ կսկսեք վոռնալ ամայացած ու խանձված դաշտերի վրա։ Համաճարակը, ժանտախտը կհնձեն մարդկանց կյանքերը։ Անասելի ու անպատմելի պատուհասներ կթափվեն ձեր գլխին։ Այդպես է ասված պատժում նրանց, ովքեր մոռանում են իրենց։

Վանականի հաստ ու կոպիտ ձայնը հնչում եր մենամենակ՝ խոր լռության մեջ. նրա ամեն մի խոսքը, ամեն մի բառը ամբոխը լսում եր ահ ու դողով։

— Ցեռ տեսնում եմ, վոր աստված դեռ շատ յերկար համբերող է, այլապես մահը չեր խնայի և վոչ մի մարդու,— շարունակեց վանականը։— Սարսափելի պատուհաս է մեզ ուղարկված մեր մեղքերի համար։ Մեր քաղաքը ամոթանքի ու խայտառակության մեջ խեղդվում է, ամոթանքից ու

խայտառակությունից այրվում։ Այդպիսի գարշելի ամոթանք Սոդոմն ու Գոմորն անգամ չեն տեսել։

Մի թեթև տագնապ զարթնեց Իյերոնիմի հոգու մեջ։ Նա իսկույն հասկացավ թե վանականը դեպի ուր է քշում ամբոխին և թե ինչ դիտումավոր ակնարկներ է անում այդ խորամանկ ծերունին։

— Դուք ամենքդ ել մեղապարտներ եք,— թնդաց վանականի ձայնը։

Նրա ձայնի մեջ այլևս չեր հնչում նախկին հեզությունը։ Նրա զայրացկոտ և ահեղ ձայնից դղրդում եր ամբողջ յեկեղեցին։ Ջլուտ և հուժկու ձեռքերով գավազանը ամուր բռնած ու բարձրացրած, նա թափահարում եր ամբոխի վրա։

— Այո՛, դուք մեղապարտնե՛ր եք, անաստվածնե՛ր, անորեննե՛ր... Բոլոր նրանք, ովքեր այստեղ հայհոյել են աստծուն, յեկեղեցուց պիտի արտաքսվեն։ Հիշեցե՛ք ձեր գործած մեղքերի մասին։ Հիշեցե՛ք ձեր ապրած կյանքի մասին։ Թշվառականնե՛ր։ Դուք աստծո՛ւն եք մոռացե՛լ, աստծո՛ւն...

Իյերոնիմն զգում եր, թե ինչպես տագնապը սառույցի նման ճնշում է իր սիրտը։ Գլուխը քարշ գցած՝ նա սպասում եր այն զարհուրելի խոսքերին, վորոնք անխուսափելիորեն պետք է դուրս ժայթքեին զայրացած վանականի շրթունքներից։

Սակայն նա դեռ մի փոքրիկ հույս ուներ, վոր քարոզիչը չի՛ արտասանիլ այդ խոսքերը և չի դրդիլ ամբոխին վոճիր գործելու։ Բայց իզո՜ւր։ Խորամանկ վանականը շատ լավ գիտեր, վոր հուզված ու գրգռված ամբոխը զոհ է պահանջում, վոր նա պետք է իր ցասումն ու զայրույթը մեկի գլխին անպայման պայթեցնե։

Նա ուժգին խփեց գավազանը յեկեղեցու սալահատակին.

— Լսե՛ք, յեղբայրներ։ Ի՞նչ ահագին հանցանք է կատարվել մեր դժբախտ քաղաքում...

Ցեվ վանականը սկսեց պատմել Ժոզեֆայի մասին։

Ժոզեֆան և Իյերոնիմը զարզանդեցին։ Արյունը սառավ Ժոզեֆայի յերակներում ա՛յն վայրկյանին, յերբ վանականը անեծքներ եր թափում ի՛ր և Իյերոնիմի գլխին։ Նրանք իրենց սարսափելի դրության մեջ զգացին։ Խավար ու տգետ ամբոխը, վոր այդքան հեշտությամբ յենթարկվում եր այդ խենթ ու մոլեռանդ ծերունու ազդեցության՝ խիստ վտանգավոր եր դառնում։

— Թող նրանց անունները նզովյա՛լ լինին,— գոռաց վանահայրը։

Ցելիգավետան հանկարծակի բռնեց ու քաշեց Իյերոնիմի ձեռքից։

— Կամա՛ց,— շշնջաց Ֆերնանդը։— Այնպե՛ս ձևացրու, իբր թե ուշաթափ ես լինում։ Անհրաժեշտ է, վոր մենք այս բոպեին դուրս գանք յեկեղեցուց։

Սակայն... արդեն ուշ եր։

— Մի քիչ այն կողմը քաշվեցեք, բարեպա՛շտ մարդիկ,— բղավեց մի տղամարդ, ցույց տալով Ժոզեֆային։ Այստեղ աստված-ուրացողներն են կանգնած։

— Վո՞րտեղ։ Այստե՞ղ։ Ո՞վ է նա,— լսվեցին զանազան ձայներ։

Ամբոխը մի կողմ քաշվեց։ Մեկը ձեռքը բարձրացրեց և հարվածեց Ժոզեֆային։ Սա կընկներ, յեթե Ֆերնանդը բռնած չլիներ։

— Խելագարվե՞լ եք, ի՞նչ է,— զայրացած բացականչեց Ֆերնանդը։— Դուք մարդի՞կ եք, թե գազաններ։

Այդ վայրկյանին վանականը տեսավ Ժոզեֆային։

— Ահա՛ նա, մեղքի և զեխության այդ աղջիկը,— ասաց նա, ցույց տալով Ժոզեֆայի վրա։—Ահա՛ մի միանձնուհի, վոր պղծել է իր պատիվը, իր կոչումը։ Ցեվ նա դեռ ելի մեր մեջ է գտնվում։

Կատաղությունից նա չեր կարողանում խոսել։ Գավազանը բարձրացնելով՝ նա սկսեց անեծքների նոր տարափ տեղալ։

— Ո՞վ է այն յերեխայի հայրը,— հարցնում էին մի քանի ձայներ՝ ցույց տալով Ֆերնանդի յերեխայի վրա, վորին Ժոզեֆան գրկած, կանգնած եր։

Ֆերնանդը սպրդնեց այդ հարցից, յերկչոտությամբ նայեց Իյերոնիմին և այնպես ձևացրեց, իբր թե չի նայում։

— Ո՞վ է այն յերեխայի հայրը,— պոռաց ամբոխը, վորին վանականն արդեն դայթակղեցրել եր։— Թող նա դուրս գա և կանգնի մեջ տեղը, յեթե հանդգնել է յեկեղեցի գալ այսոր։

— Սա ի՛մ յերեխան չէ,— պատասխանեց Ժոզեֆան և ցույց տալով Ֆերնանդի վրա՝ ասաց.— Ահա՛ նրա հայրը։

Տիրեց վայրկենական լռություն։

Վանականն սպասում եր՝ ձեռքը դեռ սպառնագին բարձրացրած և գավազանը ամուր բռնած։

— Սո՞ւտ է ասում, սո՞ւտ... այդ հանցագործը,— ասաց վանականը բարձրագոռ ձայնով.— Պատասխան պահանջեցեք նրանից, ուղիղ, ճշմարիտ պատասխան։ Մի՞թե դուք կուրացել եք... Մի՞թե դուք չեք տեսնում, վոր իր ներկայությամբ նա պղծում է աստծու տաճարը։

Ժոզեֆան՝ կտավի նման գունատ, չորս կողմն եր նայում՝ սարսափից մեծացած ու լայնացած աչքերով։ Նա լավ գիտեր, վոր ամբոխը վանականի նշանին եր սպասում՝ վայրի գազանի նման իր գոհի վրա հարձակելու համար։

— Ժողովո՛ւրդ, ո՞վ է ձեզանից այս յերիտասարդին ճանաչում,— ամբոխի միջից խոսեց մի ձայն։— Ո՞վ նրան ճանաչում է, թող առաջ գա։

Այդ վայրկյանին Ֆերնանդի յերեխան, վոր մինչև այդ նիրհում եր Ժոզեֆայի գրկում՝ ձգտեց ու մեկնվեց դեպի հայրը և բարձրաձայն մղկտալով՝ փոքրիկ թաթիկները մեկնեց դեպի նա։

— Ահա՛ նրա հայրը,— աղաղակեց ամբոխը։— Ահա՛ նրանք, այդ անաստվածները։

— Քարկոծեցե՛ք նրանց։ Դուրս վռնդեցեք տաճարից։

Մեղքն է թափառում ձեր շարքերում, մեղքը—ձայնակցելով միջամտեց վանահայրը։

— Կա՛նգ առեք, գազաններ,— գոչեց Իյերոնիմը։— Բա՛ց թողեք այդ մարդուն։ Նա ա՛յն չէ, վորին դուք փնտռում եք։ Իյերոնիմը յե՛ս եմ։

Ցեվ Իյերոնիմը դուրս յեկավ ու կանգնեց նրանց առաջ։

Ամբոխը կանգ առավ, բաց թողնելով Ֆերնանդին։ Մի ինչ վոր սպա՝ ամբոխը ճեղքելով առաջ եր անցնում։ Նա լավ ճանաչում եր Ֆերնանդին՝ ուստի և այժմ զարմանքով հարցնում եր, թե ի՞նչ է պատահել, ի՞նչ են ուզում նրանից։

— Նայեցե՛ք այդ մարդասպաններին.— հուզմունքով պատասխանեց Ֆերնանդը։— Նրանք ինձ պատառ-պատառ կանեին, յեթե այս մարդը չլիներ,— նա ցույց տվեց Իյերոնիմի վրա,—յեթե նա չասեր, վոր ի՛նքն է այն մարդը, վորին ամբոխն է փնտռում։

Ֆերնանդը կամենում եր՝ ինչ կերպ էլ լինի փրկել այդ տարաբախտներին։ Նրա գլխում մի նոր միտք ծագեց։

— Այս անզգամները Ժոզեֆային և Իյերոնիմին են փնտռում։ Նրանք ինձ Իյերոնիմի տեղ եին ընդունել։ Սա էլ ստիպված հայտնեց իր անունը։ Պետք է այս խայտառակությանը վերջ տալ։ Ապահովության համար ձերբակալեցեք այդ մարդուն և այդ կնոջը. միայն ա՛յդ կերպ կարելիյ նրանց դուրս կորզել սրիկաների ճանկերից։

— Նա սո՞ւտ է ասում։ Հենց սրա՛նք են, վոր կան,— խոսքն ընդհատեց մի մսագործ, իր հսկայական բռունցքները սեղմելով։— Դուք լսեցի՞ք թե ինչ ասաց սրբազան հայրը. ասաց՝ «անաստվածներին քարկոծեցե՛ք»։

Ժոզեֆան Ֆերնանդի՛ն հանձնեց յերկու յերեխաներին։

— Գնացե՛ք. գոնե յերեխաներին փրկեցեք,— շշնջաց Ժոզեֆան։— Թողե՛ք մեզ՝ մեր ճակատագրի կամքին։ Հեռացե՛ք, աղաչում եմ ձեզ։ Իմ յերեխայի կյանքը յես ձեզ եմ հանձնում։

— Վո՛չ։ մենք կ՚երթանք միասին։ Ցես ձեզ պետք է պաշտպանեմ,— պատասխանեց Ֆերնանդը, իր հետ տանելով Ժոզեֆային։

— Ցե՛տ քաշվեցեք ճանապարհից, գազաննե՛ր,— բղավեց նա ամբոխի վրա։— Խելքի յեկեք և մարդասպանություն մի՛ գործեք։

Ամբոխը ակամայից, մեքենաբար յե՛տ-յե՛տ քաշվեց և ճանապարհ տվեց նրանց։

— Դուք ձեռքից բաց եք թողնում նրանց, աստծու հայհոյիչներին,— իր հերթին հնչեց վանականի ահարկու և զայրալից ձայնը։— Թող նզովքը ձեր գլխին թափվի, անաստվածնե՛ր։ Նզովվի՛ն ձեր հոգիները նրա՛ համար, վոր նրանց հնարավորություն տվիք տաճարից վողջ և առողջ դուրս գալու։

Ամբոխը այս անեծքներից զայրանալով՝ տեղից շարժվեց՝ սարերից իջնող հեղեղի նման։

— Լսեցի՞ք։ Նա մեզ նզովեց,— վոռնում եյին ամենքը։— Ո՞ւր ե հանցագործ կինը։ Թող նա իր արժանի պատիժն ստանա։ Քարկոծեցե՛ք, ջարդ ու փշուր արեք նրանց։ Նրանց մեղքերի համա՛ր ե աստված մեզ պատժել։

Մի խումբ մարդիկ Իյերոնիմի վրա հարձակվեցին և գետին գլորեցին նրան։ Գազաններն սկսեցին վոտնակոխ անել նրան, վայրենի վոռնոցներ հանելով։ Ցելիզավետային, վոր յեկեղեցում կանգնած եր Իյերոնիմի կողքին, մեկը Ժոզեֆայի տեղ ընդունեց և հարվածեց։ Ցերը աղջիկը՝ գիտակցությունը կորցրած տատանվեց՝ փայտի մի ուժգին հարված իջավ գլխին և նա շնչասպառ փռվեց գետնին։

Իյերոնիմի այլանդակած դիակը քարշ տվին ու շպրտեցին մի կողմ։

Մսագործը, վոր փնտռում եր Ժոզեֆային, կռացավ՝ նայեց Ցելիզավետայի դիակին։

—Սա նա՛ չե։— վոռնաց նա, հազիվ շունչ քաշելով կատաղությո՛ւնից, վոր մթագնել եր նրա ուղեղը։—Սա նա՛ չե։ Ուրիշի՛ն փնտռեցեք։

— Դուք ուրիշին եք սպանել,— ձայնակցեցին մի քանի հոգի ամբոխից։

— Ահա՛, ահա՛ նա։

Մի խումբ մարդիկ հասան Ժոզեֆայի յետևից, վոր գնում եր Ֆերնանդի հետ։ Վերջինս սուրը քաշեց, վիրավորեց մեկին, սակայն տասնյակ ձեռքեր մեկնվեցին դեպի նա։ Նա չկարողացավ դիմանալ ամբոխի գրոհին։

Ժոզեֆայի աչքերը փայլատակեցին։ Նա վերջին անգամ հայացքն ուղղեց դեպի իր յերեխան և շտապով ընդառաջեց ու ծառացավ ամբոխի առաջ։

— Ահա՛ և յես... Սպանեցե՛ք, գազաններ...

Նա ուզեց մի բան ել ասել, բայց չվերջացրեց։ Մսագործը ձեռքը բարձրացրեց և հուժկու թափով Ժոզեֆայի կուրծքը մխեց դանակը, վոր խրվեց մինչև կոթը։ Իր զոհի արյան ցնցուղներով վոտից մինչև գլուխ արյունաթաթավ, բիզ-բիզ կանգնած մազերով, կատաղությունից կարմրած ու չռած աչքերով, կորցրած ամեն ինչ, ինչ վոր մարդկային ե, նա բղավեց ամբոխին.

— Դժո՞խք ճամբեցեք այս հրեշին։

Ֆերնանդը պատին կոթնած, ձախ ձեռքով պահում եր յերեխաներին, իսկ աջ ձեռքում սուրը ջղաձգորեն բռնած՝ պաշտպանվում եր։ Հուսահատությունը տասնապատկել եր նրա ուժերը։

Սակայն՝ ամբոխը սուլելով, վոռնալով և մռնչալով՝ սեղմ ողակ եր կազմում նրա շուրջը։ Դա սատանայի մի իսկական զորագունդ եր։ Ցեվ այդ սատանայական զորագնդի առաջնորդ՝ արյունկզակ մսագործը Ֆերնանդի ձեռքից դուրս կորզեց յերեխաներից մեկին։ Նա ճչացող յերեխային վեր բարձրացնելով և ոդի մեջ պտտցնելով՝ գլխացցուկ պատին զարկեց։ Ցեվ դժբախտ մանկան ուղեղը՝ արյան հետ խառնվելով՝ քարերի վրա շաղ յեկավ։

Ցեվ ամենուրեք տիրեց լռություն...

Անցավ մի վայրկյան ևս... Նույն լուռ ու համր դրու-

թյամբ ամբոխն սկսեց ցրվել։ Հնչեց մեծ զանգի ղողանջը։ հոգևորականությունը դուրս յեկավ տաճարից։ Ցեկեղեցու այդ սպասավորներից վոչ վոք չնայեց դիակներին։ Նրանք գնացին միանգամայն չքմեղ ձևացած, անցողակի, իբր թե իրե՛նք չեն դրդել ամբոխին՝ կատարելու այդ գազանաբարո, զազրելի վոճիրը։

Քիչ անց՝ յեկեղեցու գավթում այլևս մի մարդ անգամ չմնաց։ Ֆերնանդը կանգնած եր անշարժ և աննկարագրելի թախծությամբ սրտաճմլիկ հայացքով նայում եր իր անմեղ մանկան այլանդակված դիակին։ Նա չեր կարողանում հայացքը շրջել այդ փոքրիկ, խղճալի մարմնից։ Վերջապես նա ուշքի յեկավ, խորը հառաչ քաշեց, սառը ձեռքով ճակատի քրտինքը սրբեց և տխուր-տխուր հեռացավ այդ զարհուրելի վայրից։

Նա գրկին սեղմած ուներ Ժոզեֆայի յերեխային, վորի հորը փոխարինելու վորոշումն եր կայացրել ինքը իր հոգու խորքում։

ՑԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՑԵՎ ՆՐԱ ԱՌԱՋ ԳԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

Վորպեսզի իմանանք թե ինչպես է առաջանում յերկրաշարժը, նախ պետք է գիտենալ թե իրենից ինչ է ներկայացնում յերկիրը, վորի վրա մենք ապրում ենք։

Վաղուց հայտնի յե և գիտությունը ապացուցել է, վոր մեր մոլորակը (յերկիրը) գնդաձև է։

Ժամանակակից գիտությունը յերկրի մասին, վոր կոչվում է յերկրաբանություն (գեոլոգիա), ասում է, վոր յերկրաշարժը առաջանում է յերկրագնդի կազմվածքից։ Ամենահին ժամանակներում, անթիվ ու անհամար դարեր սրանից առաջ, յերկրագունդը բաղկացած եր հրանյութ զանգվածից և տիյեզերական յեթերում շրջում եր հրեղեն քուլայի կամ գնդի նման։ Աստիճանաբար այդ հրանյութ զանգվածը սառել է և պնդացել։ Իհարկե, սառեցումն սկվել է դրսից և այդպիսով կազմվել է յերկրի պինդ կեղևը, մինչդեռ յերկրի ներսում շարունակվում է յեռալ հրանյութ զանգվածը։

Սակայն յերկրագունդը դեռ մինչև հիմա ել սկսում է սառչել, ուստի յերկրի դրսի մասը, նրա ամրացած կեղևը, աստիճանաբար սղմվում է, ծալծլվում և խորոված խնձորի նման առաջացնում կնճիռներ կամ ծալքեր։ այդ ծալքերը վոչ այլ ինչ են, բայց յեթե՝ լեռներ, ժայռեր և հովիտներ։ Ահա այդ կնճռավորումը, վոր յերկրի մակերևույթը փոփոխության է յենթարկում, հավանականորեն հանդիսանում է իբրև պատճառ յերկրաշարժի և, այսպես կոչված, հրաբխային ժայթքումների։

Ցերկրաշարժի հետ մի՛շտ չեն հրաբխային ժայթքումներ լինում, ճիշտ այնպես, ինչպես վոր հրաբուխների, կամ

ինչպես այլ կերպ ասում են, հրաշունչ սարերի ժայթքումները տեղի չեն ունենում առանց յերկրաշարժի։ Հազվագյուտ դեպքերում են միայն այդ յերկու յերևույթները տեղի ունենում միաժամանակ։

Յերկրի սառած կեղևը բաղկացած է բազմաթիվ շերտերից։

Ուստի՝ յերբ աստիճանական սառեցման ազդեցության տակ յերկրի կեղևը սղմվում է և գոյացնում ծալքեր, այդ դեպքում ա՛յն մասերում, ուր յերկրի կեղևը փափուկ է և կավային շերտերով հարուստ՝ ծալվածքները գոյանում են աննկատելի ու թեթև կերպով։ Սակայն այլ բան է այնտեղ, ուր հողային շերտը բաղկացած է ամուր քարերից և նման նյութերից։ Այդ դեպքում հղմումների միջոցին տեղի չեն ունենում բեկումներ, տեղահանություններ և առաջանում են գետնի ցնցումներ, կամ յերկրաշարժ։ Այդ բեկումներն ու տեղահանությունները գետնի մեջ առաջացնում են ճեղքվածքներ, քարանձաքներ և վիհեր, վորոնք հասնում են մինչև յերկրի խորքերը։

Նկատված է, վոր յերկրի կեղևը ամենուրեք բեկբեկված է բազմաթիվ ճեղքվածքներով, այստեղից գիտնականները յեզրակացնում են, վոր յերկիրը չունի մի այնպիսի մաս, ուր յերկրաշարժ տեղի ունեցած չլինի, թեկուզ ամենահեռու անցյալում։ Սակայն մեր ժամանակներում յերկրաշարժը տեղի չե ունենում, գլխավորապես, լեռնոտ վայրերում։ Խորհրդային հանրապետություններում յերկրաշարժ լինում է՝ Կովկասում, Թուրքեստանում, Անդրբայքալում։ Թույլ յերկրաշարժեր յերբեմն տեղի են ունենում նաև Ղրիմում և Ուրալում։

Ամենաուժեղ և ամենահաճախ յերկրաշարժերը տեղի չեն ունենում՝ Ամերիկայում, Ցապոնիայում, Իտալիայում, Փորթուգալիայում և այլ յերկրներում։

Այդպիսի սարսափելի յերկրաշարժ և տեղի ունեցել Փորթուգալական պետության մեջ, Լիսաբոն քաղաքում,

վոր գտնվում է մի մեծ գետի յերկու ափին։ Այն ժամանակ վո՛չ միայն հողն է սասանել, այլ և յեռացել և պլպլացել է գետը, վորի ջուրը չտեսնված, հսկայական ալիքներ գոյացնելով՝ հեղեղել է ամբողջ քաղաքը։ Մարդիկ զարհուրանքով դես ու դեն են ընկել, փրկության յելք են փնտռել և չեն իմացել թե ինչ անեն, ուր փախչեն։ Ջուրը նրանց խեղդել է՝ նավերն ու նավակները փշուր-փշուր անելով։ Նրանք տների փլատակների տակ ջախջախվել ու մահացել են, իսկ հողը նրանց կլանել է՝ իր հանկարծակի բացած ճեղքվածքներում։

Մարդկությունը առայժմ չի կարող յերկրաշարժի առաջն առնել, միակ բանը, վոր մարդիկ կարող են անել, դա յերկրաշարժի հնարավորությունը նախատեսելն է. պետք է այնպես անել, վոր նա անցնի հնարավորին չափ պակաս զոհերով։

Այժմ գիտնականները առանձին գործիքներ են հնարել, վոր կոչվում են սեյսմոգրաֆներ, վորոնք կարող են հազարավոր վերստերի վրա տեղի ունեցող յերկրաշարժների ցնցումները նշանակել, ցույց տալ թե ինչ ուղղությամբ է անցել յերկրաշարժը և թե ինչքան մեծ է յեղել նրա ուժն ու թափը։

Այսպես ուրեմն, ինչպես ասացինք, մարդիկ դեռ չեն կարող կռվել յերկրաշարժի դեմ, բայց և այնպես գիտության ոգնությամբ վորոշ բանի հասել են։ Այսպես, որինակ, յապոնական գիտնական Ոմորին, վոր ուսումնասիրել է այն վայրերը, ուր առաջ յերկրաշարժեր են տեղի ունեցել, կարողացավ ցույց տալ՝ թե վորտեղ պիտի տեղի ունենա հետևյալ յերկրաշարժը—և չսխալվեց։

ՊԱՀԱՆՋԵՑԵՔ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ,
ՎՈՐ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՁՐԻ:

ԴԻՄԵԼ՝ Москва, Никольская 10.
ЦЕНТРИЗДАТ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0169952

19579

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

Г. КЛЕЙСТ.

Землетрясение

Разсказ.

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва Никольская, 10.